



The Holy See

APOSTOLIC JOURNEY OF HIS HOLINESS POPE FRANCIS

TO ARMENIA

(24-26 JUNE 2016)

HOLY MASS

HOMILY OF THE HOLY FATHER

Gyumri, Vartanants Square

Saturday, 25 June 2016

[Multimedia]

«Կը վերակարուցեն հին աւերակները, կը վերանորոգեն անբնակ քաղաքները» (Եւ 61,4): Այս վայրերուն, սիրելի եղբայրներ եւ քոյրեր, իրականացել են Նաայի մարգարէի խօսքերը որ լսեցինք: Անաստուածութեան երկար տարիների հոգեւոր կործանումէն ետք, երկրաշարժի սարսափելի նիւթական աւերածութիւններից յետոյ, այսօր գտնուում ենք այստեղ՝ Աստուծոյ շնորհակալութիւն յայտնելու հաւատը դաւանելու ազատութեան եւ առատաձեռնութեան համար, որ բազում մարդկանց օգնեց վերականգնելու համար իրենց կեանքը, հսկայական դժուարութիւններով հանդերձ: Սոյն վերածննդեան նշաններից ուզում ենք յիշեցնել Աւոցքի հիւանդանոցը, 25 տարի առաջ եւ հանաչուած որպէս «Պապի հիւանդանոցը»: Ծնած սուրբ Յովհաննէս Պօղոս Բ-ի սրտից, որ սրտանց փափաքած էր, շարունակում է մնալ որպէս շատ կարեւոր եւ սառապեալների մօտիկ ներկայութիւն, սիրոյ նշան, որ տեղական կարողիկէ հասարակութեան եւ կրօնաւորական Միաբանութիւնների կատարած գործունէութիւնների հետ միասին, գերազանցօրէն ուսուցողական է:

Արդարեւ, սէր է՝ Աստուծոց ստացած եւ ընկերոջ ընծայուած սէրն է – ինչպէս վկայում է օրինակի համար Կալկաթայի երանելի Մայր Թերեզան -, ժայռը՝ որի վրայ կարուցել եւ վերակարուցել մեր ապագան: Այս հիմքի վրայ է, որ հաստատուած է Յիսուսի աշակերտի կեանքը. սիրոյ միջոցով է, որ Եկեղեցու դէմքը երիտասարդանում եւ հմայիչ է դառնում: Գրառատ եւ քանձրացեալ սէրը բրիստոնեայի այցեւարտն է. ներկայանալու այլ կերպեր կարող է շեղիչ եւ նոյնիսկ անօգուտ լինեն, որովհետեւ – Յիսուս ասում է - «սրանից բոլորը իմանում են, որ իմ աշակերտներն էք. եթէ սիրէք իրար» (Յի 13,35): Կոչուած ենք միշտ կառուցելու եւ վերակառուցելու հաղորդութիւնը, առանց երբեք հոգնելու,

կանուրջներ սարքելու, ոչ թէ պարիսպներ կամ բաժանարար պատնեհներ: Հայ ժողովուրդը միշտ աւելի միացած լինի հաւատի եւ սիրոյ մէջ, եւ հաւատացեալները լաւագոյն օրինակը կարողանան տալ, համագործակցելով իրար հետ, փոխադարձ յարգանքով եւ երկխօսութեամբ, իմանալով որ «միակ մրցոյթը որ հնարաւոր է Տիրոջ աշակերտների միջեւ՝ ստուգելն է թէ ո՛վ ի վիճակի է առաւել մեծ սէրը նուիրելու» (ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊՕՂՈՍ Բ, Քարոզ, 27 սեպտեմբեր 2001. *Ուսուցումներ* ԻԴ, 2 [2001], 478):

Աստուած բնակում է սիրողի մէջ. Աստուած բնակում է որտեղ սիրում են իրար, յատկապէս որտեղ տկարներին եւ աղքատներին են խնամում: Նա միշտ օրհնում եւ պաշտպանում է նրան ով «բարի լուրն է տանում թշուառներին, կտորուած սրտերի վէրքերն է պատում եւ մխիթարում է վշտացածներին» (հմմտ. 1-2 համարները): Շատ կարիքն ունենք սրան. կարիքն ունենք քրիստոնեաների, որ յոգնութիւնից չխորտակուեն եւ չյուսալքուեն փոխադարձ անհասկացողութիւններից, այլ բացուեն Աստուծոյ սիրոյ ծրագիրներին. բարի կամքով մարդկանց կարիքը կայ, որ գործնականին եւ ոչ թէ խօսքերով օգնեն դժուարութեան մէջ գտնուող եղբայրներին եւ հոյրերին. կարիքը կայ աւելի արդար հասարակութեան, որտեղ խրափանջիւրը կարողանայ արժանավայել կեանք վարել եւ արդարօրէն հասուցուող աշխատանք:

Եկել են որպէս ուխտաւոր այս օրհնեալ երկիրը. հանդիպելով ձեզ հետ, որ ժամանել էք տարբեր շրջաններից եւ մօտակա Վրաստանից, տեսնում ենք որ Աստուած ձեզ մենակ չի թողել. Նա այցելած է ձեր ժողովրդին (հմմտ. 24 (1,68): Աստուած յիշեց ձեր հաւատարմութիւնը Աւետարանին, ձեր հաւատի անդրանկութեան, հիմնուած Առաքեալների փարոզութեան վրայ, որոնց յիշատակն էք տօնում այսօր: Այս հողի վրայ, հուսկ, ձեր սուրբերից եւ վարդապետներից ոմանք ստեղծեցին այբուբենը ժողովրդի համար եւ ժողովուրդը Աւետարանի պատգամը փարոզեց, բոլորը միասին վկայելով, նոյնիսկ արեան եւ ծանր փորձանքիւնների գնով, որ «Աստուծոյ սէրը կեանքից աւել արժէ» (հմմտ. Մկ 63,4): Քրիստոնէական հաւատը այսպէս դարձաւ հայ ժողովրդի շունչը եւ նրա պատմութեան սիրտը: Այն ձեր ապագային յայտն է նաեւ:

Սակայն, միշտ առկայ է փորձութիւնը՝ հաւատը վերածելու անցեալի պատկանող գեղեցիկ մի բանի, կարծես լինէր սփանչելի մանրակարուած մի մատեան, թանգարանում պահելիք: Սակայն, եթէ պատմութեան դիւաններում պահուի, հաւատը կորցնում է հաղորդակցական ոյժը, կենսունակ եւ փոխակերպող իր գեղեցկութիւնը, բոլորի հանդէպ իր դրական բացումով: Մինչդեռ, հաւատը ծնում եւ վերածնում է Տիրոջ, Յիսուսի հետ կենդանի հանդիպումից, իր փրկող եւ կեանքի բոլոր պարագաներում լուսաւորող գրասրտութեան փորձառութեամբ: Օգտակար է ամէն օր վերանորոգել այս հանդիպումը, Աստուծոյ Խօսքի ընթերցումով եւ աղօթքով բացուելով իր սիրուն, որ երջանկութիւնն է սնուցում: Իսկ երբ Յիսուս կանչի հետեւելու իրեն, յատկապէս երբ ձեզ՝ երիտասարդներից հրաւիրի, մի՛ տատանւէք փառութեամբ պատասխանելու նրան «այո՛»: Նա մեզ հանաչում է, մեզ իսկապէս սիրում է, եւ ուզում է ազատել սիրտը վախի եւ հպարտութեան ծանրութիւններից: Նրան տեղ տալով, կարող ենք սէր հառազայթել եւ Աւետարանը փարոզել: Այսպէս կարողանալու էք ձեր աւետարանող մեծ պատմութեան սկիզբ տալ, որին Եկեղեցին եւ աշխարհը կարիքն ունեն այս նեղութեան ժամանակներին, որ միաժամանակ նաեւ ողորմութեան ժամանակներ են:

Հենց անցած տարուան Աստուածային Ողորմութեան Կիրակի օրուան ծիսակատարութեամբ, որին մասնակցեց իմ սիրելի եղբայրը՝ Գարեգինը, որին շնորհակալութիւն եւ յայտնում ինձ ազնուօրէն ընդունելու համար եւ իր ներկայութեամբ եւ խօսքով մեզ պատուեց, ուզեցի բոլորի ուշադրութեան յանձնել Գրիգոր Նարեկացու կերպարը, ընդհանրական Եկեղեցու Վարդապետ: Նա կարապետ եւ մարգարէն էր աստուածային ողորմութեան: Դժուար է գտնել որեւէ մէկին, որ հաւասարի նրան, քննելու անդնդային թշուառութիւնները, որ կարող են մարդկային սրտում տնաւորուել. սակայն նա վերածում է

դրանց աստուածային սիրոյ անդադրուն, արտասուալի եւ վստահ պաղատանքի, հաստատելով որ Աստուած «պարգեւների բաշխողն է, բնութեամբ բարի [...], միջոցառութեան ձայն, քաջալերանքի լուր, ուրախութեան թռիչք, [...] անհամեմատելի բնութիւն, յորդառատ ողորմութիւն, [...] վերկարար համբոյր» (*Մատեան ողբերգութեան, 3,1*), յայտարարելով որ «երբեք բարկութեան խաւարից չի մթափնել նրա ողորմութեան լոյսը» (*ճոյն, 16,1*): Նարեկացին ոչ միայն վարդապետ է ուսուցման, այլ յատկապէս կեանքի, որովհետեւ սովորեցնում է, թէ ինչքան կարեւոր է հանաչել մենք մեզ *ողորմութեան կարօտ*, եւ մեր թշուառութիւնների եւ վերքերի առաջ, բացուել Տիրոջ, «Աստուած մերձաւոր, բարութեան փափկութիւն» (*ճոյն, 17,2*), «սիրով լի մարդկանց նկատմամբ, [...] հուր որ մեղքի խոլուն է սպառում» (*ճոյն 16,2*): Այս սուրբ վկան մարգարէաբար ներկայացնում է ձեր ժողովրդին, որ պատմութեան ընթացքում մեկնաբանել է շատ անգամ ողբերգական սեփական դէպքերը՝ նրա գրութիւնների լոյսի տակ: Նա, սակայն, ընդհանրական Եկեղեցու Վարդապետ է արդէն. ձեր սիրելի ժողովուրդը եւս, տառապելու քաջատեղեակ եւ Յարութեան գորութեամբ, կարողանայ հաւատի վկայ եւ վարդապետ լինել մեզ բոլորիս:

Աստուածամօր բարեխօսութեամբ, Թագուհի եւ «ցնծութիւն մեր տառապեալ բնութեան» (*Շարակնոց, Աւետման կանոն*), խնդրում են, սուրբ Գրիգորի խօսքերով իսկ, աստուածային ողորմութիւնը եւ սիրելուց երբեք չյոգնելու պարգեւը. Սուրբ Հոգի «հզօր պաշտպան, բարեխօս եւ խաղաբարար, քեզ եւս ուղղում մեր աղաչանքները: [...] Պարգեւիր մեզ շնորհը՝ սիրոյ եւ բարի գործերի քաջալերման [...] Հոգի քաջութեան, գրութեան, մարդասիրութեան եւ ողորմութեան, [...] ողորմեա՛ մեզ, Տէր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան քուն» (*Շարական Պենտեկոստէի*):

* * *

Այս ծիսակատարութեան աւարտին ուզում են իմ խորին շնորհակալութիւնը յայտնել Գարեգին Բ Կաթողիկոսին եւ Մինասեան Արքեպիսկոպոսին, ազնիւ խօսքերի համար, որ ինձ ուղղեցին, ինչպէս նաեւ Ղապրտեան Պատրիարքին եւ ներկայ եպիսկոպոսներին, քահանաներին եւ պետական այրերին որ մեզ հիւրընկալեցին:

Շնորհակալ են ձեզ բոլորիդ որ մասնակցեցիք, Գիւմրի հասնելով նաեւ տարբեր գաւառներից եւ մօտակայ Վրաստանից: Կամենում են յատկապէս ողջունել նրանց, ովքեր մեծ առատաձեռնութեամբ եւ շոշափելի սիրով, օգնում են կարիքաւորներին: Մտածում են յատկապէս քահանիկ տարի առաջ բացուած Աւոցի հիւանդանոցի մասին եւ որ հանաչուած է որպէս «Պապի հիւանդանոցը», սուրբ Յովհաննէս Պօղոս Բ-ի սրտից ծնուած, առ այսօր յոյժ կարեւոր եւ մօտիկ ներկայութիւն է, նրան համար որ տառապում է. մտածում են տեղական կաթողիկէ հասարակութեան գործունէութեան մասին, Անարատ Յղութեան քոյրերից մինչեւ Կալկաթայի երանելի Մայր Թերեզայի Սիրոյ Առաքեալներին:

Սուրբ Կոյս Մարիամը, մեր Մայրը, միշտ ձեզ ընկերանայ եւ առաջնորդի բոլորի քայլերը եղբայրութեան եւ խաղաղութեան ուղիով: